Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 758 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
«ՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Սոցիալական պայմանների բարելավման նպատակով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս խոշորացված համայնքի Ներքին Խնձորեսկ բնակավայրում կառուցել 3 բնակելի տուն՝ որոնք կտրամադրվեն Արցախի Հադրութ և Շուշի քաղաքներից տեղահանված և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս խոշորացված համայնքի Ներքին Խնձորեսկում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքներին: Տները կտրամադրվեն շահառուներին 10 տարի անհատույց օգտագործման նպատակով (որպեսզի իրավունք չունենան վաճառելու), այնուհետև՝ նվիրատվության պայմանագրի հիման վրա:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների զծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս խոշորացված համայնքի Ներքին Խնձորեսկ բնակավայր. սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	98,445,200 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	44-օրյա պատերազմի հետևանքներով Արցախի Հադրութ և Շուշի քաղաքներից տեղահանված ու սոցիալապես անապահով ընտանիքներ

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի հոկտեմբերի 17-ից մինչև 2024 թվականի ապրիլի 1-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս խոշորացված համայնքի Ներքին Խնձորեսկ բնակավայրում կառուցել 3 բնակելի տուն՝ 98,445,200 դրամ արժողությամբ. նախատեսվում է իրականացնել 2022 թվականի հոկտեմբերի 17-ից մինչև 2024 թվականի ապրիլի 1-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Նախատեսվում է տների կառուցման շինարարական աշխատանքների իրականացում, մասնավորապես՝ կատարել հողային աշխատանքներ, պատերի, հիմնակմախքի, ծածկերի, միջնորմների կառուցման, դռների և պատուհանների տեղադրում, անցկացնել ներքին ջրամատակարարման և կոյուղու, գազամատակարարման, էլեկտրամատակարարման և ջեռուցման ցանցերը, կատարել ներքին հարդարման աշխատանքներ՝ 98,445,200 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ Սյունիքի մարզպետարան, Գորիս համայնքապետարան, Ներքին Խնձորեսկ համայնքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

26.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ